ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *3*

Մաս 1: ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ *5*

ՄԱՍ 2: ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ *7*

ՄԱՍ 3: ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ (ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) *9*

ՄԱՍ 4: ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ *33*

ՄԱՍ 5: ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ *39*

ՄԱՍ 6: ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ *42*

ՄԱՍ 7: ՌԻՍԿԵՐԸ *49*

ՄԱՍ 8: ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ *50*

ՄԱՍ 9: ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ *51*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը կարևոր նշանակություն ունի սերունդների զարգացման համար. այն նպաստում է ճանաչողական, սոցիալական և էմոցիոնալ զարգացմանը, ապահովում է հնարավորությունների հասանելիություն, խթանում է ստեղծագործությունն ու նորարարությունը և ձևավորում քաղաքացիության զգացում: Կրթությունը կարևոր է անհատների, համայնքների և հասարակությունների աճի և բարգավաճման համար:

Հանրակրթական դպրոցները կարևոր են ուժեղ, ներառական և բարգավաճ հասարակություն կառուցելու համար: Նրանք ապահովում են կրթության հասանելիություն, խթանում են սոցիալական շարժունակությունը, սերմանում են քաղաքացիական արժեքներ, զարգացնում են հմուտ աշխատուժը և խթանում են նորարարությունն ու ստեղծագործականությունը:

Կրթությունը առանցքային գործոն է աղքատության շրջափուլը կոտրելու համար, և հանրակրթական դպրոցները կարևոր դեր են խաղում երեխաների համար իրենց ողջ ներուժն օգտագործելու հնարավորություններ ստեղծելու գործում:

Դպրոցի զարգացման ծրագիրը(այսուհետ՝ ԴԶԾ) ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է դպրոցում հինգ տարիների աշխատանքի տեսլականը՝ 2023-2028 թթ: Դպրոցը առաջնորդվում է իր զարգացման հեռանկարային ծրագրով և աշխատում է այնպես, որ հնարավորինս արդյունավետ և ժամանակին իրականացվեն նախատեսված աշխատանքներն ու միջոցառումները: Այն մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթական համակարգի բարեփոխումները և հետևելով դրանց՝ իրականացնում է իր աշխատանքները:

ԴԶԾ-ն կազմելու համար անհրաժեշտ է բավականաչափ ծանոթ լինել դպրոցին, մասնավորապես՝ սովորողների, նրանց ծնողների, մանկավարժական աշխատողների սկզբունքներին, արժեքներին, կրթական գործընթացի նկատմամբ ունեցած նրանց

հայացքներին և մոտեցումներին. սովորողների կրթական պահանջներին, ուսուցիչների մասնագիտական և մեթոդական կարողություններին ու կարիքներին, դպրոցի ուսումնամեթոդական, նյութատեխնիկական ռեսուրսներին, դպրոցի ղեկավարման մոտեցումներին և գործիքակազմին:

Այսպիսով, «Կրաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: ԴԶԾ-ում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, հանդիպումներ շահառուների հետ, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները:

ՄԱՍ 1: ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Համաձայն ՀՀ «Կրթության մասին» օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

ԴԶԾ-ի կառուցման համար հիմք են հանդիսացել.

- ՀՀ Սահմանադրությունը
- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
- «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը
- «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
- «ՊՈԱԿ»-ի մասին ՀՀ օրենքը
- Դպրոցի կանոնադրությունը
- Կրթակարգը
- ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենիհիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) ստեղծվել է 1991 թվականին: Այն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցն, ըստ կրթական մակարդակների իրականացնում է տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր, որոնց շրջանակներում, համաձայն

հաստատության կանոնադրությամբ ամրագրված գործառույթների, իրականացված աշխատանքների նպատակն է՝ սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշեի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է:

Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության, մարդասիրության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության, աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

Տարիների ընթացքում Դպրոցը ձեռք է բերել և շարունակում է պահպանել բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանում, ունի բոլոր ռեսուրսները որակյալ կրություն ապահովելու համար:

ՄԱՍ 2: ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի առաջնային առաքելությունն է անվճար և արդար կրթություն տրամադրել բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց ծագումից կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակից: Սա ներառում է սովորողներին գիտելիքների, հմտությունների և արժեքների ապահովումը, որն անհրաժեշտ է ակադեմիական, սոցիալական և մասնագիտական հաջողությունների համար:

Բացի ակադեմիական ուսուցումից, Դպրոցը նպատակ ունի նաև խթանել սոցիալական և հուզական զարգացումը, քննադատական մտածողության հմտությունները և քաղաքացիական ներգրավվածությունը սովորողների շրջանում: Դպրոցը ձգտում է ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, որտեղ սովորողները զգան իրենց գնահատված և հարգված, և որտեղ նրանք կարող են զարգացնել դրական հարաբերություններ հասակակիցների և մեծահասակների հետ:

Ընդհանուր առմամբ, Դպրոցի առաջնային առաքելությունն է ապահովել բարձրորակ կրթություն, որը պատրաստում է սովորողներին հաջողակ լինել կյանքի բոլոր ոլորտներում և դրական ներդրում ունենալ իրենց համայնքներում:

Դպրոցի առաքելությունն է՝ գտնվել անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Դպրոցի առաքելությունն իրականացնող որոշակի դրույթներ.

- Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել կրթական միջավայր բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել օժտված, ընդունակ կամ որևէ բնագավառում հետաքրքրություն դրսևորած աշակերտին, խթանել նրա նախասիրությունները:

- ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտի համար իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթություն ապահովել, ձևավորել համապատասխան միջավայր։
- Ապահովել համայնքի ներգրավվածությունը՝ կրթական որակի բարելավման նպատակով, համագործակցության և փոխվստահության ակնկալիքով։
- Պատրաստել անհատ, ով համարժեք գնահատում է իրավիճակը, սեփական հնարավորությունները և պատրաստ է լուծումներ գտնել։
- Ձևավորել ինքնուրույնություն. մեդիագրագետ, համարձակ երազող, սեփական տեսակետը բարձրաձայնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ։ Դպրոցը պետք է ջանքերը կենտրոնացնի սովորողի առաջնորդական որակներն ու հմտությունները զարգացնելու վրա, որպեսզի նրանք ապագայում կարողանան դառնալ հաջողակ առաջնորդներ։
- Ստեղծել սերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթը և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը։
- Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույթի բացառիկությունը և գիտակցի իր՝ պահպանողի և փոխանցողի դերը։

Առողջ քննադատական մտածելակերպով, ժամանակակից մասնագիտական կողմնորոշմամբ սերունդ ձևավորելու համար դպրոցի բարեփոխումն ու հայացքների թարմացումը պետք է սկսել այսօր։Եվ այս բոլոր խնդիրների լուծման ճանապարհները ես տեսնում եմ հստակ ու քայլ առ քայլ իրագործելի։

Դպրոցի նպատակն է մինչև 2028 թ. դառնալ ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան որակ ապահովող և կրթության բոլոր բնագավառներում հաջողություններ գրանցող առաջատար հանրակրթական հաստատություն ոչ միայն տարածաշրջանում, այլև՝ Հայաստանի Հանրապետությունում։

Դպրոցի տեսլականն է՝ *լինելով կրթության հիմնաքար, ապահովելու է կրթության նոր որակակն աստիճան, հիմք դնելով անհատականության կերտմանն և զարգացմանը:*

ՄԱՍ 3։ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ։ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ (ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

«Կրաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները: Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով Դպրոցի ուժեղ և համեմատաբար թույլ կողմերը:

Համաձայն լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- ✓ տարրական հանրակրթական 25 սահմանային տեղ
- ✓ հիմնական հանրակրթական 45 սահմանային տեղ։

Այս պահին դպրոցում սովորում է 15 աշակերտ՝ ընդգրկված 1-9 դասարաններում (2022-2023 ուստարվա սկզբին սովորողների թիվը 15 է)։

Դպրոցը միահերթ է, աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա։

Ստորև ներկայացվում է դասարանների մասին տեղեկատվություն.

Դասարաններ	Դասարանների թիվը 2022-2023	Սովորողների թիվը 2022-2023
1-ին դասարան	1	2
2-րդ դասարան	-	-
3-րդ դասարան	1	2
4-րդ դասարան	1	1
5-րդ դասարան	-	-
6-րդ դասարան	1	4

7-րդ դասարան	1	3
8-րդ դասարան	1	2
9-րդ դասարան	1	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**-**	**15**

Ստորև ներկայացվում է դպրոցի գրադարանային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվություն.

Գրքերի տեսակ	Չափման միավոր	Քանակ
Դասագրքեր	հատ	250
Գեղարվեստական և ուսումնա- մեթոդական	հատ	250
Տեղեկատվական	հատ	95
	ԸՆԴԱՄԵՆԸ	**595**

Ստորև ներկայացվում է դպրոցի հաստիքային ցուցակը.

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ «Կրաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023թ.								
հ/հ	հաստիքի անվանումը	հաստիք այինմիավորների քանակը /դրույք/	սահմանվող պաշտոնային դրույքաչափը առանց հավելավճարների /դրամ/	բարձր լեռնային վայրերում աշխատելու համար հավելավճար /դրամ/	այլ հավելավճարներ /դրամ/	սահմանվող պաշտոնային դրույքաչափը հավելավճարները ներառյալ /դրամ/	ընդամենը ամսական աշխատավարձ/ֆոնդ /դրամ/	ընդամենը տարեկան աշխատավարձի ֆոնդ /դրամ/
1	2	3	4	5	6	7=4+5+6	8=7*3	9=8*12
Վարչատնտեսական անձնակազմ								
1	տնօրեն	1.0	179421			179421	179421	2153052
2	հաշվապահ	0,66	132000			132000	87120	1045440
	ընդամենը	1,66	311421			311421	266541	3198492

	վարչատնտես. անձնակազմ							
Ուսումնա-օժանդակ անձնակազմ								
1	Համակարգչայինօպերատոր	0,5	104000			104000	52000	624000
2	Քաղ. պաշտպանություն	0.3	95625			95625	28688	344256
3	Ուսուցչիօգնական	0.5	104632			104632	52316	627792
	ընդամենը ուսումնա-օժանդակ անձնակազմը	1.3	304257			304257	133004	1596048
Սպասարկող անձնակազմ								
1	հավաքարար	0.75	95625			95625	71719	860628
2	պահակ	1.0	95625			95625	95625	1147500
3	Խոհարար-օգնական	0.5	104000			104000	52000	624000
4	բակապահ.	1.0	95625			95625	95625	1147500
	ընդամենը սպասարկող անձնակազմը	3.25	390875			390875	314969	3779628
ԸՆԴԱՄԵՆԸ		**6.21**	**1006553**			**1006553**	**714514**	**8574168**

3.1 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցման արդյունավետությունը ստանում է լիարժեք դրսևորում, եթե կիրառվում են նորարարական տեխնոլոգիաներ: Ուսուցման ինտերակտիվ և համագործակցային մեթոդների ներդրումը լայն հնարավորություն է ընձեռում սովորողին պասիվ ուսումնառողից դառնալու ինքնուրույն և խմբերով համատեղ աշխատանք իրականացնող անհատ, գիտելիք ձեռքբերելու գործընթացի գործուն մասնակից:

Պետք է հասնել այն բանին, որ համակարգիչների օգտագործումը ընդլայնի ուսումնական նյութի որոնման, հաղորդման, յուրացման հնարավորությունները, նպաստի ուսուցման գործընթացի որակի բարձրացմանը՝ շեշտադրելով տեխնոլոգիաների և նորարարությունների նպատակային կիրառումը:

Ուսուցման նոր տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների կիրառումը կնպաստի.

- Կրթական մակարդակի բարձրացմանը
- Սովորողների և սովորացնողների խոսքային-տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածողության զարգացմանը,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը
- Մասնագիտական կողմնորոշմանը
- Մեդիագրագիտությանը, տեղեկացվածությանը
- սովորողների և սովորացնողների ինքնուրույնության, սեփական ուժերի նկատմամաբ վստահության ձեռքբերմանը,
- սովորողների՝ կարդացածի կամ սովորածի արդյունքում ծագած մտքերը արտահայտելուն, քննարկելուն, հարցեր տալուն և պատասխանելուն, ինչպես նաև լսելուն իրենց արտահայտած մտքերի արձագանքը,սովորելու մոտիվացիան (շարժաթիռը) որպես ինքնակրթության միջոց օգտագործելուն:

3.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Դպրոցի շենքը տիպային է՝ կազմված 1 մասնաշենքից, զբաղեցնում է 278մ քառ.տարածք, հողամասը՝ 0,5597 հա: Առկա են 4 դասասենյակ, 1 վարչական սենյակ, 1 ուսուցչանոց: Առկա են 2 սանհանգույց, համակարգչային սենյակ, գրադարան: Դպրոցն ունի տագնապային շչակ, ապահովված է հակահրդեհային կրակմարիչներով, «պատ» վահանակներով: Դպրոցն ունի 1 հարմարեցված ճաշարան:

Դպրոցում 2010 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: 2018 թվականի սեպտեմբերից «Դպրոցական սնունդ» ծրագիրը իրականացվում է պետբյուջեի ֆինանսավորմամբ:

Դպրոցը ջեռուցվում է արևային էներգիայով:

Դպրոցի շենքը վերանորոգվել է 2022թ.՝ Ֆյուր Արմենիա կազմակերպության միջոցով: Հիմնանորոգվել է կտուրը, ներկվել պատերը, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, փոխվել է երկու սանհանգույցները ամբողջությամբ, տեղադրվել է արևային էլեկտրակայան, էլեկտրական սալիկներ, անցկացվել է հակահրդեհային արագ արձագանքման համակարգ, միացվել է ինտերնետ համակարգ:

Ախուրյանի համայնքապետարանի միջոցով անցկացվել է դպրոցի արևային էներգիայի համար անհրաժեշտ եռաֆազ էլեկտրոէներգիան և լուծվել է ջրամատակարարման խնդիրը:

2022թ-ին պետական բյուջեից կառավարությունը 20.217.800 ՀՀ դրամ է տրամադրել Դպրոցին շինարարական աշխատանքներ կատարելու համար:

2023 թվականի հունվար- փետրվար ամիսներին դպրոցի հատակի մի հատվածը

սալիկապատվել է, միջանցքի և դասասենյակների հատակը լինոլեումապատվել է:

2023թ-ի ապրիլից սկսվել է Դպրոցի արտաքին հատվածի շինարարական աշխատանքները, մասնավորապես կատարվել է սալիկապատում, աշխատանքները դեռ ընթանում են:

Վերանորոգման շինարարական աշխատանքներն իրականացվել են ԱՁ «Գուրգեն Սողոմոնյանի» կողմից:

Ստորև ներկայացվում է դպրոցի շենքային վիճակի մասին տեղեկատվություն.

Շենքային պայմաններ	Քանակը	Փաստացի վիճակը
Դասասենյակ	4	լավ
Սանհանգույցներ	2	լավ
Պահեստային սենյակ	1	լավ
Համակարգչային սենյակ/ ուսուցչանոց	1	լավ
Գրադարան	1	լավ
Ճաշարան	1	լավ
Խոհանոց	1	լավ

Ստորև ներկայացվում է դպրոցի նյութատեխնիկական բազայի մասին տեղեկատվություն.

Անվանում	Քանակ (հատ)
Սեղան աշակերտական (դեղին և կապույտ)	28
Աթոռ (դեղին և կապույտ)	56
Աթոռ (փափուկ)	19
Սեղան (շախմատի)	6
Աթոռ (շախմատի)	10
Գրասեղան (1պահարանով)	4
Ղեկավարի սեղան (դիմադիր)	1
Գրքերի պահարան	5
Պահարան	2
Պահարան	1

Հայելիով կախիչ	1
Կախիչ	0
Սեղան փոքր (աշակերտական կանաչ)	2
Աթոռ փոքր (աշակերտական կանաչ)	4
Ճաշարանային սեղան	4
Ճաշարանային աթոռ	16
Սպասքի պահարան	1
Գազօջախ	1
Խաղային կլոր սեղան	1
Ուսուցչի սեղան	1
Ուսուցչի աթոռ	1
Ուսուցչի սեղան	1
Էլեկտրական սալիկ	6
Էլեկտրական տաքացուցիչ	4
Երաժշտական կենտրոն philips	1
Տպիչ սարք Canon	1
Համակարգիչ ASUS P4 2.5G QUAD Q9300	1
Մոնիտոր 19 (օգտագործված)	1
Համակարգիչ HP Compaq 8200 BOE51ES A2Q	1
Տպիչ HP Laserjet 1536dnf MFP	1
Հոսանքի սնուցման սարք UPS	1
Համակարգիչ CPU G645/P8H61-M	2
Մոնիտոր Samsung 19A100N	2
Տպիչ Phaser3140	1
Մոնիտոր HP CNC 140 11CM	1
Համակարգիչ	1
Համակարգիչ	1
Պլանշետ IBRIS	1
Պլանշետ Բրգփա	2

Դյուրակիր համակարգիչ	1
Տպիչ	1
Տպիչ սարք CANON	1
Մոնիտոր	1
Մարտկոց	1
TV tuner	1
Կրակմարիչ	6
Հակահրդեհային վահանակ	1
Wireless Ap Bridge Cisco 1242	1
Ալեհավաք Directorial Antenna 24 dbi, 2.4GHz	1
Չժանգոտվող պողպատից դարակներ	1
Կշեռք (էլեկտրական, կենցաղային, սեղանի)	1
Սեղան մետաղական 1200մմ*600մմ*850մմ 0.8մմ հաստությամբ	2
Լվացարան մեկտեղանոց չ/պ 1000 *600 մմ 0.8մմ	1
Կենցաղային սառնարան 250-320լ	1
Ջրատաքացուցիչ 80լ	1
Էլեկտրական սալօջախ	1
Էլեկտրական ջեռուցիչ	1
Էլեկտրական ջեռուցիչ սալիկ	2
Պրոյեկտոր optoma W381	1
UPS	1
Էլեկտրական ջեռուցիչ սալիկ	2
Բարձրախոս	1
Բազկաթոռ	1
Տոնածառ	1

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

Հաստատության շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա			
Ուժեղ կողմ	Հաստատության շենքային հնարավորությունները թույլատրում են իրականացնել զարգացման ծրագրի կատարողականը	Լաբորատոր սենյակների, առարկայական կաբինետների բացակայություն	Թույլ կողմ
	Կատարված է կտուրի հիմնանորոգում	Դիտակտիկ նյութերի և լաբորատոր գույքի անհամապատասխանություն արդի պահանջներին/բացակայություն	
	Կատարված է ներքին հարդարման աշխատանքներ	Միջոցառումների դահլիճի բացակայություն	
	Առկա է անհատական ջեռուցման համակարգ	Մարզադահլիճի և հանդերձարանների բացակայություն	
	Սանհանգույցները վերանորոգված են	Բուժկետի բացակայություն	
	Դպրոցում առկա են թվով 3 գործող էլեկտրոնային դասեր վարելու համար նախատեսված նյութատեխնիկական բազա	Մարզական գույքի բացակայություն	
	Առկա է ինտերնետային հասանելիություն՝ վայֆայ սարք	Արդի գրադարանի բացակայություն	
	Դպրոցն ունի 286 քմ հողատարածք	Ֆինանասական հոսքերի անկայունություն	
	Շենքային պայմանների համապատասխանություն հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների ընդունելության համար	Ազգային երգ ու պարի ուսուցում	
	Հովանավորների կողմից ուշադրություն դեպի դպրոցը	Օլիմպիական խմբակների ստեղծում	
	Դպրոցի տարածքը ասֆալտապատվել է ՀՀ կառավարությյան կողմից հատկացված գումարի միջոցով	Համագործակցություն այլ դպրոցի նույն տարիքի սովորողների հետ մրցույթների, բանավեճերի, քննարկումների միջոցով	
	Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում,		
	Դպրոցի մուտքի մոտ կա թեքահարթակ ԿԱՊԿՈՒ երեխաների համար:		
	Արևային էներգիայի համակարգի ձեռքբերում		

Հիմնախնդիր – Դպրոցի նյութատեխնիկական բազայի անհամապատասխանություն 21-րդ դարի պահանջներին: Դպրոցի շենքային և տեխնիկական վիճակի գնահատումը՝ լավ: Լաբորատոր և առարկայական սենյակների խիստ անհրաժեշտություն: Տարածքի բարեկարգում և ձեռնարկատիրական գործունեության հիմնում՝ որպես ֆինասական վիճակի ապահովում:

3.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների դերը դպրոցի կառավարման մեջ շատ կարևոր է, որովհետև նրանց գործունեության արդյունքում դպրոցի կառավարումը դառնում է ավելի արդյունավետ, տեսանելի և մասնակցային։

Դպրոցում գործում են՝

- միասնական կառավարման խորհուրդ
- մանկավարժականխորհուրդ, մանկավարժականհամակազմ
- ծնողական խորհուրդ
- աշակերտական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդ՝ 15 անձ.այդ թվում՝ ուսուցչի օգնական։ Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 0,75-1 դրույք ։

Վարչական աշխատողներ՝ 1 անձ (տնօրենի պաշտոնակատար)։

Սպասարկող անձնակազմ՝ 5 անձ.այդ թվում՝ պահակներ, հաշվապահ, օպերատոր, մաքրուհի։

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

- ✓ մանկավարժական խորհուրդ (ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները),
- ✓ աշակերտական խորհուրդ (ընդգրկված են 6-9-րդ դասարանների սովորողներ)
- ✓ ծնողական խորհուրդ (ընդգրկված են դպրոցի 1-9 դասարանների ծնողական խորհուրդների նախագահները)։

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ			
Ուժեղ կողմ	Դպրոցն ունի առարկայական 1 մասնախումբ, որը ամիսը մեկ գումարում է նիստ, և կազմակերպում է ուսումնադաստիարակչական աշխատանքներ	Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ	Թույլ կողմ
	Դպրոցն ունի կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ և աշակերտական խորհուրդ, որոնք պարտաճանաչ կատարում են իրենց գործառույթները:	Առարկայական մասնախմբը չի համագործակցում հարևան դպրոցների մ/մների հետ:	



Նպատակ

Կառավարման և խորհրդակաական մարմինների դերի բարձրացում որակական բարելավում

⇩

Խնդիրներ

⇩

Կառավարման խորհրդի դերի բարձրացում
Ծնողների հետ համագործակցության ակտիվացում
Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում
Մանկավարժական խորհրդի դերի բարձրացում
հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորում

⇩

Գործունեություն

⇩

1. **Ընդլայնել դպրոցի Կառավարման խորհրդի լիազորությունները հետևյալ ուղղություններով**

ա) Կրթության պետական կառավարման լիազորված մարմնին առաջարկություններ ներկայացնել դպրոցի զարգացման վերաբերյալ
բ) Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում
գ) Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին

2. **Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում**

ա) Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ
բ) Կազմակերպել համատեղ /ծնող, աշակերտ, ուսուցիչ/ միջոցառումներ
գ) Ծնողխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով

3. **Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը՝**

ա) Կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր
բ) Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, ծնող-աշակերտ, համայնք-աշակերտ հարաբերությունները

4. **Մանկավարժական խորհրդի դերի բարձրացում**

ա) Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում
բ) Առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքներ ի ակտիվացում
գ) Ուշադրության կենտրոնում պահել մանկխորհրդի ընդունած որոշումների ճիշտ և ժամանակին կատարումը

5. **Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորում**

ա) Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել շրջանավարտներ ի և հոգաբարձուներ ի խորհուրդներ
բ) Այդ խորհուրդների կազմում պետք է դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց
գ) Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիական բազայի համալրմանը

3.4 ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Այսօր կրթական համակարգը անցել է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվում է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների և կարողունակությունների վրա:

Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Այսօր ուսուցիչը, կարիք ունի իր կարողունակությունները հարստացնելու, որպեսզի կարողանա սովորողի մոտ ձևավորել գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեքային համակարգ:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմեր.

Աշխատակազմ			
Ուժեղ կողմ	Դպրոցը համալրված է բանիմաց ուսուցիչներով	Ուսուցչական համակազմում նկատվում է համակարգչային հմտությունների պակաս	Թույլ կողմ
	Դպրոցն ունի ձևավորված մշակութային այցեր իրականացնելու ներքին ավանդույթ	Լաբորատոր փորձեր գրեթե չեն իրականացվում	
	Մանկավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, Մեկ մանկավարժ ունի միջին մասնագիտական կրթություն	Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին	
	Դպրոցն օժանդակում է կադրերի առաջխաղացմանը՝ հնարավորություն տալով աշխատանքային առաջխաղացման ձգտողներին զարգացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները	Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թվի բացակայություն	
	Դասերը սահմանափակված չեն ծրագրային նյութի նեղ առարկայական թեմաներով, հաճախ են միջոցառումները և ոչ ֆորմալ դասերը	Օլիմպիադաների պասիվ մասնակցություն:	
	Դպրոցը ակտիվ մասնակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին:	Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մների հետ	
	Գրադարանային ֆոնդը հագեցած է գեղարվեստական, ուսումնամեթոդական գրքերով և ամսագրերով		

Նպատակ

Մանկավարժական համակազմի որակական բարելավում

Խնդիրներ

Ուսուցիչների աշխատանքի որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ

Գործունեություն

1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին
2. Նյութերով համալրել ռեսուրս-կենտրոնը, գրադարանը / մեթոդական ամսագրեր, պաստառներ, դիդակտիկ պարագաներ, էլ. կրթական նյութեր, առարկայական ծրագրերի CD-ներ/
3. Շարունակաբար կազմակերպել դասընթացներ՝ ուսուցիչների համակարգչային գրագիտությունը բարելավելու համար
4. Կազմել ժամանակացույց՝ մ/մ ների կողմից մանկավարժների աշխատանքների արդյունքում հետաքրքրաշարժ ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու համար

3.5 ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

Սովորողը ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է:

Շատ կարևորում եմ ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը.

1. Տնօրինության կողմից կխթանվի սովորողների նախաձեռնությունները, կօժանդակի դրանց իրագործմանը.
2. Սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը
3. սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և նախաձեռնություններին մասնակցությունը.
4. սովորողների կողմից կազմակերպած միջոցառումները.
5. սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը,
6. իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները
7. սովորող-սովորող և սովորող-ուսուցիչ հարաբերությունները ուսումնական հաստատությունում:

Սովորողների ուժեղ և թույլ կողմերը են

Սովորողներ			
Ուժեղ կողմ	Աշակերտական համակազմը պատրաստ է նորարարության	Օլիմպիադաների պասիվ մասնակցություն:	Թույլ կողմ
	Գրեթե բոլոր սովորողները տիրապետում են ՏՀՏ գործիքներին:	Սովորողների բնագիտական առարկաների նկատմամբ վերաբերմունքը ավելի ցածր է:	
	Ծնողական համակազմը պատրաստակամ է և խելացի	Կա ընթերցանության պակաս	
	Բոլոր սովորողները ապահովված են դասագրքերով:		
	Մեծ թվով սովորողներ հաճախում են <ԹՈՒՄՈ> կենտրոն		
	Աշակերտական խորհրդի՝ սեփական նախաձեռնությամբ դպրոցի գործունեությանը մասնակցության ակտիվություն		
	Դպրոցը չունի ԿԱՊԿՈՒ աշակերտներ		

Նպատակ

Սովորողների կրթական որակի բարելավում

Խնդիրներ

Սովորողների կրթական իրավունքի իրացումը ՀՊՉ-ին համապատասխան

Սովորողների մոտ ձևավորել կարողունակությունների զարգացում

Գործունեություն

1. **Սովորողների մոտ զարգացնել**

ա) սովորել սովորելու կարողունակություն
բ) թվային և մեդիա կարողունակություն
գ) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
դ) սոցիալական կարողունակություն

2. Ուսուցման գործընթացին զուգահեռ ապահովել սովորողների մարդասիրական, մշակութային, քրիստոնեական, գեղագիտական, ֆիզիկական կարողունակություն

3. Գրադարանը կահավորել ժամանակակից ստանդարտներին համապատասխան, որպեսզի առաջանա հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ

<u>Հիմնախնդիր</u> ՝ Առաջիկա 5 տարիների ընթացքում անհրաժեշտ է ձևավորել հոգաբարձուների խորհուրդ: Դրա կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, տեղական իշխանության ներկայացուցիչների: Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների ստեղծման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացում: Հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ձեռք բերելը: Դրա մեջ պետք է ներգրավել անհատ բարերարների, դպրոցի շրջանավարտների և կամավորների:

3.6 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցություն			
Ուժեղ կողմ	Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ:	Չունենք համագործակցություն ալլ կրթական կառույցների, հարևան դպրոցների հետ	Թույլ կողմ
	Դպրոցը համագործակցում է Ֆյուր Արմենիեն հիմնադրամի հետ		
	Դպրոցը համագործակցում է ԿԳՆ-ի, ԿԱԻ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, մարզպետարանի, ԱԻՆ-ի, զորամասերի, ոստիկանության, համայնքապետարանի և այլ կառույցների հետ		
	Դպրոցը համագործակցում է Կենտրոնական Շիրակ ՏԱԽ-ի հետ		

Նպատակ

Սովորողների սոցիալականացման բարձրացում

Խնդիրներ

Համագործակցելն այլ կրթական կառույցների հետ

Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի

Գործունեություն

1. Անցկացնել հանդիպումներ մշակութային գործիչների հետ
2. Կազմակերպել այցեկություններ մշակութային կենտրոններ
3. Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, թատրոններ

3.6 ԴՊՐՈՑԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից: Պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝կախված սովորողների թվից:

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով.

1. Իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական ն ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար
2. Իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր
3. Կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ
4. Ստեղծել ումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում նաև այլ նպատակներով: Այդ իսկ պատճառով նախատեսում եմ դպրոցում օգտագործել հնարավոր տարբեր միջոցներ և ուսումնական արդի մեթոդները ուսման որակը բարձրացնելու և հանրակրթական պետական չափորոշիչային պահանջներին՝ ակնկալվող վերջնարդյունքներին ու կարողունակություններին հասնելու համար:

3.7 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնականում և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցներն այսօր ֆինանսավորվում են աշակերտների թվով, և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիրները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով:

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում:

3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են:

5. Կապի ծառայությունների ծախսեր
6. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր

Նախատեսում եմ լրացուցիչ ծախսեր կոմունալ ծառայությունների համար, քանի որ գրեթե միշտ դպրոցում առաջացել են խնդիրներ կապված վերոնշյալ աշխատանքների հետ կապված:

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին:

Ոլորտի խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, զարգացնելու տնօրենի և հաշվապահի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար:

3.8 ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն հանդիսանում է դպրոցի տնօրենը:

Չնայած հանրակրթական դպրոցների կայքէջերի գործարկումը մեծապես նպաստել է դպրոցների ֆինանսական գործունեության հանրայնացմանը, այնուամենայնիվ առկա են մի շարք բացեր, որոնք անհրաժեշտ է շտկել, քանզի ոչ բոլոր դպրոցներ են կատարում համապատասն կարգի ընթացակարգը:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

Հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում.

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Եկամտահարկի վճարներ /այս ուղղություններով բյուջետային

Բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են,կամ ընդհանրապես չեն լինում/.

- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր /այս ուղղություններով
- Կապի ծառայությունների ծախսեր
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
- Կոմունալ ծառայությունների վճարներ

Ստորև ներկայացվում է բյուջեի տարեկան ծախսերի մասին տեղեկություն.

Բյուջե	2022
Տարեկան ֆինանսավորում/սուբսիդիա տարրական և հիմնական ծրագրերով/	18221.4 հազար
Որից սնունդը	345.5
Տարեսկզբի մնացորդը	1582.6
Այլ եկամուտներ /տարածքի վարձակալություն/	0
Դրամաշնորհ/տարակարգ ստացած ուսուցիչների	152.7
Տրանսպորտային ծախսեր	180.5
Տարեվերջի մնացորդ	2322.5

Բյուջեյի ծախսերի հիմնական ուղղությունները	Ծրագրային 2022	Փաստացի ծախս 2022 Հզ. Դրամ
Աշխատավարձ և հավելավճարներ	17403.8	16568.2
Էներգետիկ ծառայություններ	530.0	430.4
Գրասենյակային նյութեր	163.0	163.0
Կենցաղային և հանրային նյութեր	125.4	125.4
Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ	48.0	48.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	390.5	390.5
Պարտադիր վճարներ	30.0	30.0
Այլ ծախսեր /դասագիրք/	5.5	5.5
Վարչական սարքավորումներ	72.0	72.0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	55.0	55.0
Մասնագիտական ծառայություններ	80.0	80.0

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- Պետական բյուջե
- Արտաբյուջետային միջոցներ
- Բարերարներ և նվիրատուներ
- Շրջանավարտներ
- Ծնողներ

3.9 ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերացնելու անճշտությունները և շտկելու թերությունները

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ			
Ուժեղ կողմ	Բոլոր ուսուցիչներն ունեն առարկայական թեմատիկ պլաններ , դասի են ներկայանում օրվա դասի պլանով	Քիչ են կատարում են փոխադարձ դասալսումներ	Թույլ կողմ
	Բոլոր ուսուցիչներն ունեն կիսամյակային /տարեկան/ աշխատանքային պլան և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ներկայացնում են հաշվետվություններ	Գրավոր աշխատանքների արդյունքում ցածր առաջադիմություն է ցուցաբերվում մաթեմատիկա և բնագիտական առարկաներից:	
	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին մանկավարժական խորհրդի նիստում քննարկվում և կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացվում հաստատության ներքին կարգապահական կանոնները, այդ թվում հաստատության աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:	Առցանց կրթության գործքիների տիրապետում/google-classroom, zoom, kahoot, imdproc.am, khan academy, etc//	
	Սիստեմատիկ բացակայող երեխաներ չկան:	Տարակարգ ունեցող ուսուցիչների ոչ բավարար քանակ	
	Մեթոդմիավորումների համակարգված աշխատանք	ՏՀՏ կարողությունների բարելավման կարիք	
	Լավագույն փորձի խտացում	ՏՀՏ գործիքների լայն կիրառում դասապրոցեսում	

Նպատակ

Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն

Խնդիրներ

1. Դպրոցի բոլոր պլանների կատարման մշտական վերահսկողություն
2. Ուսուցիչների աշխատանքի վերահսկում
3. Սովորողների կողմից գիտելիքի յուրացման գործընթացի վերահսկողություն

Գործունեություն

1. **Վերահսկել հաճախումների հաշվառման, մատենավարության աշխատանքները**

ա) վերահսկել բոլոր տեսակի պլանների պատշաճ և ժամանակին կատարումը՝ առարկայական մասնախմբերի աշխատանքային պլաններ, դասղեկների տարեկան աշխատանքային պլաններ, փոխտնօրենների տարեկան աշխատանքային պլաններ, մանկավարժական աշխատողների աշխատանքային պլաններ

բ) հաստատել ու վերահսկել հերթապահության կարգը

2. **Առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ամփոփելու նպատակով անցկացնել ստուգարքներ**

ա) ուսումնասիրել աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում

բ) ուսումնասիրել հոգեբանական մթնոլորտը դասարաններում

գ) ուսումնասիրել աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը

դ) վերահսկողության արդյունքում հայտնաբերված խնդիրների լուծման համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ

3.10 ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցի տնօրենը իր գործունեության արդյունավետ կազմակերպման համար պետք է տիրապետի որոշակի սկզբունքների: Հանրակրթություն իրականացնելիս դպրոցի տնօրենը անվերապահորեն պետք է դրսևորի հետևյալ հատկանիշները և սկզբունքները՝

- Պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն
- Հարգալից և բարեհամբույր վերաբերմունք
- Արդարամտություն
- Համագործակցության պատրաստակամություն
- Իրավիճակի գործունեության ճկունություն
- Ստեղծագործական մտածողություն

3.11 ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոց մտնող ցանկացած ուսուցիչ կամ մանկավարժական աշխատող պետք է լինի օրինակելի, կարգապահ և պարտաճանաչ:

Տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացները առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հետևյալ միջոցառումների իրականացում՝

1.Անձնակազմի գործունեության խրախուսում

2.Ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման իրականացում:

3.Մանկավարժական անձնակազմի պարբերաբար վերապատրաստում

4.Կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից:

5.Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում:

ՄԱՍ 4: ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի նպատակները բխում են Դպրոցի կանոնադրությամբ սահմանված նպատակից և ուղղված են նոր որակ և նոր արդյունք ստեղծելուն:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական նպատակն է դպրոցի համալիր կրթական միջավայրի ձևավորումը, կրթության գործընթացի բոլոր մասնակիցների (սովորողի, սովորողի ծնողի, մանկավարժների, վարչական աշխատողների, խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և այլն) թիմային, համագործակցված աշխատանքի արդյունքում որակյալ և հասանելի կրթության ապահովումը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական ոլորտի նորարական զարգացման պահանջներին համապատասխան:

Ստորև նպատակները սահմանվում են ըստ ոլորտների.

ՈԼՈՐՏ	ՆՊԱՏԱԿ
Ուսումնական միջավայրի բարելավում	Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան նոր մարզահրապարակի կառուցում
Կադրեր	Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում: Ուսուցիչների ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության (առարկայական, մեթոդական ՏՀՏ կիրառման ուղղությամբ) ապահովման միջոցով ուսման որակի զարգացում
Ուսումնական գործընթաց	Սովորողների կրթության, դաստիարակության իրականացում նորովի մոտեցումներով: Կրթության որակի բարձրացում
Դաստիարակության գործընթաց (արժեքների ձևավորում, քաղաքացիական կրթության ապահովում, համայնքային կյանքին սովորողների ներգրավում)	➢ Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: ➢ Համայնք-դպրոց կապի ամրապնդում: ➢ Դպրոցում աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ առողջ աշխատանքային հարաբերությունների ապահովում: ➢ Դպրոցում սովորողների և աշխատակազմի առողջ ապրելակերպի նյութական և բարոյահոգեբանական պայմանների ապահովում: ➢ Խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունքում սովորողների դաստիարակչական մակարդակի բարձրացում:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական նպատակին հասնելու անհրաժեշտ խնդիրները.

- ✓ դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծումը,
- ✓ դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացումը,
- ✓ դպրոցի առարակայական դասասենյակների, լաբորատորիաների ստեղծումը և կահավորումը,
- ✓ դպրոցի բակի վերանորագման իրականացումը,
- ✓ դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացումը,
- ✓ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդնում,
- ✓ մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը,
- ✓ աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործումը,
- ✓ սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործումը,
- ✓ դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդումը,
- ✓ Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան նոր մարզահրապարակի կառուցում
- ✓ ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- ✓ դպրոցի կառավարման ժողովրդավարացումը, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Հիմնախնդիր 1

Նորամուծությունների կիրառման հանդեպ մանկավարժների մի մասի ցանկության պակասը: ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման համեմատաբար ցածր մակարդակը բացասաբար է անդրադառնում ուսման որակի վրա

⇩

Նպատակ

Ուսուցիչների ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության (առարկայական, մեթոդական, ՏՀՏ կիրառման ուղղությամբ) ապահովման միջոցով ուսման որակի բարձրացումը:

⇩

Խնդիրներ

Ստեղծել պահանջներին համապատասխ համակարգչային կաբինետ
Շարունակել կազմակերպել մեթոդական զեկույցներ, լսումներ, քննարկումներ
Ապահովել ՏՀՏ վերապատրաստման շարունակությունը

⇩

Գործունեություն

- Հմակարգչային սենյակի կահավորման և վերանորոգման համար ներգրավել ծնողական խորհրդին
- Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ՏՀՏ գործիքների հետագա ընդլայնման համար
- Դպրոցի պաշտոնական կայք էջը օգտագործել որպես ոլորտի նորարարությունների տարածման կարևորագույն աղբյուր և համայնքի հետ հետադարձ կապի և տեղեկատվությանտարածման կարևորագույն հարթակներ
- Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասերում:
- Ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատնքի պլանավորում:
- Կազմել մասնախմբի անդամների կողմից ներկայացվող զեկույցների, ընթերցումների ժամանակացույց
- Նյութերը համապատասխանաբար օգտագործել դասապրոցեսներում:

⇩

Կատարող անձիք

տնօրեն, առարկայական մասնախմբի ղեկավար

⇩

Ժամանակացույց

2023-2028թ.

Հիմնախնդիր 2

Հասարակական կյանքին սովորողների որոշ խմբերի ոչ լիարժեք ինտեգրումը պատճառ է սովորողների ինքնադրսևորմանը, թերարժեքությանը:

Նպատակ

Սովորողների՝ հասարակական կյանքի ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացումը:

Խնդիրներ

Ակտիվացնել ծնողխորհրդի ակտիվությունը

Գործունեություն

- Մասնակցել ծնողխորհրդի նիստերին, հանդես գալ առաջար կություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնութ յունների իրականացումը:
- Կազմել հանդիպումների ժամանակացույց ամբողջ ուստարվա համար:
- Ծնողխորհրդի ակտիվ մասնակ ցությամբ անցկացնել զրույցներ, սեմի նարներ, միջոցառումներ՝ մշակված թեմաներով:
- Կազմակերպել համատեղ (ծնող, աշա կերտ, ուսուցչական կոլեկտիվ) տարե վերջյան միջոցառումներ:
- Ակտիվորեն մասնակցել քաղաքային, մարզային և հանրային միջոցառումներին:
- Հանդես գալ սեփական նախաձեռնություններով՝ (սանիտարական օրեր, ծառատունկ)

Կատարող անձիք

տնօրեն, առարկայական դասղեկներ

Ժամանակացույց

2023-2028թ.

Հիմնախնդիր 3

Դպրոցի կառավարման գործում ծնողների ներգրավվածության, ակտիվության ոչ լիարժեքությունը պատճառ է հասարակության մեջ առկա խմբավորումներում սովորողների ներգրավված լինելու վտանգին:

⇩

Նպատակ

Սովորողներին զերծ պահել առկա հասարակական խմբավորումներում ընդգրկվելու վտանգից:

⇩

Գործունեություն

- Լինել խիստ հետևո ղական դասղեկների ժամերի նպատակային իրագործմանը
- Անցկացնել հարցում:
- Վերլուծել արդյունքը:
- Կազմել դասընթացի ծրագիր:
- Նախապատրաստել նյութեր
- Կազմել աշխատանքայի ժամանակացույց

⇩

Կատարող անձիք

տնօրեն, առարկայական դասղեկներ

⇩

Ժամանակացույց

2023-2028թ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՆՇՈՒՄՆԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ
Ուսումնասիրել 2021 թ. փոխված չափորոշչային նոր պահանջները ՄՄ- ում և մշակել դրանց ներդրման մանրամասն գործողությունների ծրագիր:	2023-2024թթ	Տնօրինություն
Կազմակերպել անձնակազմի ինտենսիվ վերապատրաստման դասընթացներ՝ կարողունակությունների վրա հիմնված կրթության բաղադրիչին անցնելու նպատակով:	Շարունակական	Պատասխանատու՝ ԿԳՄՄ , ԿԶՆԱԿ, դպրոց
Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նախագծային ուսուցման, ուսումնահետազոտական աշխատանքների անցկացման վերաբերյալ:	2023-2024թթ	Տնօրինություն
Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ՏՀՏ գործիքների հետագա ընդլայնման համար:	2023թթ սեպտեմբեր - 2024թթ հունվար	Տնօրինություն
Կազմակերպել մեթոդական սեմինարներ, քննարկումներ,	2023-2028թթ	Տնօրինություն
Հմագործակցություն իրավապահ մարմինների հետ, մշակութային օջախների հետ	2023-2028թթ	Տնօրինություն
Ուսոիմնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարկայական ուսուցիչների հետ	2023-2028թթ	Տնօրինություն, ուսուցիչնեչ, դասղեկ

ՄԱՍ 5: ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	*> ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Կազմակերպչականփուլ	2023-2024թթ
Փորձարարականփուլ	2024-2027թթ
Վերլուծականփուլ	2027-2028թթ
Մոնիթորինգիփուլ	2023-2028թթ. (ուստարիների ու ավարտին)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
Դպրոցը համալրել այնպիսի մանկավարժներով, ովքեր իրենց փորձով օրինակ կլինեն երիտասարդ մանկավարժների համար	Տնօրեն	2023-2028 թթ.
Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններին և դրանից բխող ծրագրային, առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը	Տնօրեն, վերապատրաստված ուսուցիչներ	2023-2025 թթ.
Ծնողների և համայնքի օգնությամբ հնարավորության դեպքում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ	Տնօրեն, Շրջանավարտներ, Ծնողներ, Համայնքի ներկայացուցիչներ	2024-2025 թթ.
Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ	Տնօրեն, Համակարգող	2023-2028 թթ.
Դպրոցում զարգացումը ապահովելու նպատակով կայուն ֆինանսական հոսքերի ապահովում	Տնօրեն, Համակարգող	2023-2028 թթ.
Կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ	դասղեկներ	2023-2028 թթ.
Կազմակերպել հայրենասիրական թեմայով միջոցառումներ,	Դասղեկներ	2023-2028 թթ.

Ամրապնդել համագործակցությունը պետական կառավարման մարիմինների, համայնքապետարանին բարերարների հետ	Տնօրեն	2023-2028 թթ.
Մարզի և հանրապետության կրթամշակութային ՀԿ-ների, զորամասի, Եկեղեցու և այլ կառույցների հետ ապահովել կայուն համագործակցություն	Տնօրեն, դասղեկներ	2023-2028 թթ.
Էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում	Տնօրեն, համակարգող	2023-2024 թթ.
Ներքին կարգապահական կանոններում ավելի հստակ ամրագրել ուսուցչի իրավունքների և պարտականությունների շրջանակը՝ ամրապնդելու ուսուցչի դիրքը և հեղինակությունը դպրոցում և ծնողական համայնքում	Տնօրեն	2023 -2024 թթ.
Կազմակերպել հանդիպումներ կրթության առաջատար փորձագետների հետ, փորձի փոխանակման, ոլորտի արդիական խնդիրների վերհանման նպատակով:	Տնօրեն	2023-2025 թթ.
Քննարկումներ և սեմինարներ կազմակերպել սովորողի բարեվարքության և վարվելակերպի էթիկայի վերաբերյալ:	Տնօրեն, դասղեկներ	2023-2025 թթ.

- **<u>Աշակերտական հարցման արդյունքում դուրս բերված առաջարկներ</u>**
  - ✓ Դասի թեմային համահունչ համակարգչային խաղեր կիրառել
  - ✓ Բացօթյա դասեր անցկացնել ավելի անկաշկանդ մթնոլորտում
  - ✓ Ճանաչողական էքսկուրսիաներ կազմակերպել
  - ✓ Լրացուցիչ կրթական ծրագրեր նախաձեռնել
  - ✓ Ավելացնել արտադասարանական խմբակները
  - ✓ Տնային առաջադրանքները կրճատել
  - ✓ Ջերմացնել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները
  - ✓ Օգնել աշակերտին բարձացնել ինքնագնահատականը
  - ✓ Խթանել աշակերտի մտքի թռիչքը
  - ✓ Փոխել պատմողական առարկաների մատուցման ձևը
  - ✓ Գնահատման ձևերը ավելի բազմազան դարձնել
  - ✓ Դասղեկների զրույցները աշակերտների հետ ավելի ինտենսիվ դարձնել:

- **<u>Ծնողական հարցման արդյունքում դուրս բերված առաջարկներ</u>**
- ✓ Բնագիտական առարկաների կիրառական մոտեցումների մշակում
- ✓ Պատմություն առարկայի դասավանդման մեթոդների բազմազանություն
- ✓ Գնահատման ձևերի բազմազանություն
- ✓ Բնության գրկում դասերի անցկացում
- ✓ Լրացուցիչ արտադպրոցական խմբակների բացում՝ ռոբոտաշինություն, սպորտ։

Պատասխանատուներ

Զարգացման ծրագրի իրագործման համար պատասխանատու են դպրոցի կառավարման և խորհրդակցական բոլոր անդամները՝ ըստ իրենց գործառույթների շրջանակի

ՄԱՍ 6։ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները։ Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար։

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական։ Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Դրան մասնակցում են վարչական ու մանկավարժական աշխատողները, սովորողները ու ծնողները։ Ներքին և արտաքին գնահատումը պետք է ուղղորդել մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը։

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն։ Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են Զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցներն են՝

- Զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհրդների կողմից
- Յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների
- Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը։
- Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության տրամադրումը։
- Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին ներգրավումը։

Զարգացման ծրագրում նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում.

- ✓ սովորողներին կտրամադրվի ժամանակակից և որակյալ կրթություն,
- ✓ կբարելավվի ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական որակները,
- ✓ դպրոցի ղեկավարում և կառավարում համագործակցային բարեփոխումների միջոցով,
- ✓ տարվա լավագույն աշակերտ մրցույթի չափանիշների մշակում և ներդնում,
- ✓ համագործակցություն դպրոց-համայք, տարբեր կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների և կազմակերպությունների հետ, ԿՏԱԿ-ի և այլ պետական մարմինների հետ, ծնողական և աշակերտական խորհուրդների համատեղ ծրագրերի իրականացում,
- ✓ Դպրոցի նյութատեխնիկական բազայի արդիականացում,
- ✓ Ձևավորել դպրոցի բարեկամ շրջանավարտների խորհուրդ, որի աշխատանքները կնպաստեն դպրոցի կարիքների օժանդակմանը, ֆինանսական տարբեր միջոցների ձեռքբերմանը,
- ✓ Միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն
- ✓ Բարերարների միջոցով նպաստել դպրոցի կարիքների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

6.1 ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Հատկապես կարևոր է ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքների իրացումն ու շահերի պաշտպանությունը՝ բացառելով այդ գործընթացում որևէ խտրական մոտեցման դրսևորում:

Երեխաների դաստիարակության և նրանց պաշտպանվածության ապահովման կարևոր երաշխիքներից է ծնողների և մանկավարժների իրազեկվածությունը:

Երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական, թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա:

Դպրոցում տիրող միջավայրը չափազանց կարևոր է բոլոր աշակերտների համար, և այն մեծ ազդեցություն է թողնում նրանց հետագա կյանքի վրա: Ուսումնասիրությունները փաստում են, որ դպրոցում առկա բռնությունը՝ ծեծկռտուքները, բուլինգը, լեզվակռիվը, պիտակավորումը և նման այլ երևույթները, բացասական ազդեցություն են թողնում բոլոր երեխաների վրա՝ թե՛ բռնության ենթարկվողի ու թե՛ բռնություն գործադրողի վրա:

Բռնությունը դպրոցներում, լինում է հուզական, ֆիզիկական կամ սեռական բռնություն, որը կատարվում է երեխաների կամ մանկավարժների կողմից, դպրոցի աշակերտների նկատմամբ, կամ աշակերտների կողմից՝ ուսուցիչների նկատմամբ:

Դպրոցական բռնության դեմ պայքարը ընթանում է մի քանի ուղղություններով, որոնց մեջ ընդգրկված են ինչպես ընդհանուր (հանդուժողականության պրոպոգանդա, հասարակության մշակութային մակարդակի բարձրացում), այնպես էլ անհատական (աշխատանք ընտանիքների հետ, հասակակիցների նկատմամբ ագրեսիա դրսևորող երեխաների հոգեբանական օգնություն) մեթոդներ:

Դպրոցում երեխաների հանդեպ կիրառվող բռնությունը կանխելու 6 հիմնական քայլերն են՝

1. Աջակցել ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին-վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը մեծացնում են դրական ծնողավարման մեթոդների կիրառման հավանականությունը, ինչը բնականաբար նվազեցնում է ընտանիքում բռնության վտանգը:

2. Օգնել երեխաներին ու դեռահասներին կառավարել ռիսկերն ու մարտահրավերները- Երեխաներին և դեռահասներին պետք է աջակցել հաղթահարել բոլոր խնդիրներն ու մարտահրավերները՝ առանց բռնություն գործադրելու: Բացտրել նաև, որ դպրոցում և համայնքներում բռնությունը նվազեցնելու համար չափազանց կարևոր է նաև բռնության ենթարկվելու դեպքում օգնության դիմելը:

3. Փոխել բռնությունը և խտրականությունը քաջալերող սոցիալական նորմերն ու սովորույթները- Բռնությունը կանխելու համար որոշիչ է վերջ դնել այն թաքցնելու, անտեսանելի դարձնելու սովորույթներին ու սոցիալական նորմերին: Բռնության նկատմամբ անտարբերությունը կավելացնի բռնության ենթարկվողների թիվը:

4. Երեխաներին անհրաժեշտ ծառայությունների հիմնադրումն ու տրամադրումը- Քաջալերել երեխաներին դիմել մասնագիտական աջակցության և պատմել բռնության դեպքերի մասին:

5. Ներդնել երեխաներին պաշտպանող համապատասխան քաղաքականություն- դրա պահպանումը հասարակության համար հստակ ազդակ է, որ բռնությունն անընդունելի է ու պատժելի:

6. Վիճակագրության հավաքագրումը և հետազոտությունները-Բռնության մասին ամեն ինչ իմանալով՝ որտեղից է գալիս, ինչ ձևեր ունի, որ տարիքային խումբն է ամենաշատը ենթարկվում բռնության և այլն, հնարավոր է կանխարգելման ռազմավարություն ձևավորել և պլանավորել: Դա հնարավորություն է տալիս սահմանել թիրախներ և վերջ դնել բռնությանը:

Դպրոցականների շրջանում ավելի տարածված է բռնության տեսակներից բուլիինգը /հալածանքը/ և օտարումը:

Երեխաների դեպքում նամանավանդ դեռահասության շրջանում, դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է: Այդ տարիքում մարդը փնտրում է իր կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար, հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է դառնալ նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը: Յուրահատուկ արտաքին տեսքը, տարբերվող մտածելակերպը, սիրած զբաղմունքը, առողջական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական ծանր պայմանները և այլն:

Դպրոցական բուլիինգի հիմնական պատճառը ծաղրողի հոգեկան խնդիրներն են: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը: Հետևաբար այսպիսի մարդկանցից ոչ թե պետք է հեռու մնալ կամ, ինչպես անում են որոշ ուսուցիչներ, թևերը թափ տալ և ասել, որ այդ երեխան չի ուղղվի, այլ փորձել հասկանալ նրան, հասկանալ, թե ինչու է նրա մեջ այդ ցանկությունն առաջանում, և գոնե ջանալ այդ երեխային ճիշտ ուղու վրա դնել: Բուլինգի ենթարկվող անձը սովորաբար չի կարող ինքն իրեն պաշտպանել, ինչի համար և ընտրվում է բռնարարի կողմից, որպես զոհ: Դրանով և բուլինգը տարբերվում կոնֆլիկտից, քանի որ կողմերը հավասար չեն: Բուլինգը կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության տեսքով:

Կան բուլինգի դրսևորման մի քանի եղանակ՝

- կիբերբուլինգ, որն իրականացվում է համակարգչի ու համացանցի միջոցով՝ օգտագործելով դրանք որպես վնասելու գործիք,
- ֆիզիկական բուլինգ՝ հրմշտոցի, հարվածների, ծեծի միջոցով,
- վերբալ կամ խոսքային բուլինգ՝ պիտակավորման և ծաղրի միջոցով: Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը:

- դպրոցում կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին։
- դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին։
- աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին ուսումնասիրել այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները։
- դա նկատելու դեպքում պետք է լսել երկու կողմին էլ, առանց նվաստացումների բուլերին բացատրել, որ բուլինգը վատ երևույթ է։
- երբեք չխրախուսել բուլերների կատարած վատ արարքները։ Թե՛ բուլերի, թե՛ զոհի ծնողներին զգուշացնել հարաբերությունների և գործողությունների ընթացքի մասին՝ նրանց հետ լինելով ակտիվ համագործակցության մեջ։

Բուլիինգի կանխարգելման հարցում անհամեմատելի է նաև ծնողի դերը. Ծնողների հետ ճիշտ ծնողավարման աշխատանքներ պետք է տանել։

Շատ կարևոր է, որ ուսուցիչները և ծնողները ուշադիր լինեն, քանի որ երեխայի մոտ առաջ եկած փոփոխությունները ինչպես վարքի, այնպես էլ առաջադիմության և ընդհանուր հուզական վիճակում կարող են ազդանշան լինել բուլինգի։ Երեխաների մոտ բուլինգի առկայության ցուցանիշներ են՝

- Դպրոց գնալու ցանկության պակաս
- Ֆիզիկական, մարմնական բողոքներ
- Կապտուկներ ու քերծվածքներ
- Գլխացավ, փորացավ
- Քնի և ախորժակի խանգարումներ
- Հուզական բացասական դրսևորումներ
- Մեկուսացվածություն
- Կորած կամ վնասված իրեր,
- Ակտիվություններում ներգրավելու ցանկության պակաս
- Ընկերների պակաս կամ բացակայություն
- Առաջադիմության անկում

Ցավոք սրտի այս երևույթները մեր օրերում գնալով աճում են: Եվ այս հանգամանքը ևս մեկ անգամ ազդանշան է դպրոցում հոգեբանի և սոց.մանկավարժի անհրաժեշտության մասին: Դպրոցում այս մասնագետների ներկայության պարագայում, նման խնդիրները էլ ավելի հեշտությամբ կգտնեն իրենց լուծումները: Սովորողների հետ կաշխատի մի թիմ, որի անդամները կլինեն դասղեկը, ծնողները, հոգեբանը և սոցմանկավարժը:

6.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԴՊՐՈՑ

2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում: Մինչև 2025 թ. Հայաստանում բոլոր հանրակրթական դպրոցների կրթության կազմակերպումը կլինի ներառական:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Դպրոցում չեն սովորում Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, սակայն դպրոցը պատրաստ է ընդունելու և ապահովելու համապատասխան պայմաններ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

ՄԱՍ 7: ՌԻՍԿԵՐԸ

Սույն բաժնում ներկայացված են նպատակի և խնդիրների լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողության իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը, ինչպես նաև հնարավոր ռիսկերը մեղմող գործողությունները:

Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ առանց դրանց հաշվառման ամենալավ մշակված ծրագիրն անգամ դժվար է իրականացնելը:

Ռիսկեր	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ
1. Նորամուծությունների մերժում 2. Մշակութային կարծրատիպեր	1. Մանկավարժներին ընդգրկել տարբեր վերապատրաստումների՝ մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: 2. Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը
3. Ծնող-աշակերտ-ուսուցիչ համագործակցության պասիվություն 4. Մոտիվացիայի ցածր մակարդակ 5. Ֆինանսներ	3. քննարկումների, հանդիպումների կազմակերպում, որոնց արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը կդառնա ավելի դյուրին: 4. Խրախուսել ուսուցիչների ձեռքբերումներն ու հաջողությունները 5. Գտնել ֆինանսական աղբյուրներ
6. Արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝առցանց կրթությունը:	6. Գտնել համապատասխան տեխնիկա աշակերտների և ուսուցիչների համար

ՄԱՍ 8։ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է։ Գնահատման գործիքները յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշներ են, որոնց միջոցով չափվում է ակնկալվող արդյունքը։ Արդյունքների գնահատումը պետք է իրականացնել պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների միջոցով։ Դրանք պետք է հասանելի լինեն պետական լիազոր մարմիններին, դպրոցի աշխատակազմին, սովորողների ծնողներին, սովորողներին, համայնքին և այլն։ Ծրագրի նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված՝ Ծրագրի սահմանված յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող միջոցները և նյութատեխնիկական պարագաները Ծրագրում կնկարագրվեն և Կառավարման Խորհրդի հաստատմանը կներկայացվեն Դպրոցում առկա և ձեռքբերման ենթակա նյութերի, սարքերի, միջոցների և դրանց հիման վրա գործողությունների հնարավոր փոփոխությունների և լրացումների իրականացման արդյունքում: Սույն գործառույթի իրականացումը կապահովվի տնօրեն ընտրվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:

Ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ է պարբերաբար հրապարակել մատչելի տեղեկատվություն դպրոցի հայտարարությունների համար սահմանված տեղում, հաստատության կայքում և իրազեկել ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ։

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ են հետևյալ պարագաները և միջոցները.

- ✓ Ֆինանսական միջոցներ
- ✓ Նվիրատվություններ
- ✓ Բարերարներ
- ✓ Ժամանակակից տեխնիկա

ՄԱՍ 9: ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով:

Ծրագրի իրականացման վերահսկողությունը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված հաստատության գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Ծրագրի վերահսկողությունն իրականացնում է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը:

Դպրոցի տնօրենը յուրաքանչյուր գործառույթի իրականացման կամ չիրականացման (ոչ լիարժեք իրականացման) վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Դպրոցի կառավարման խորհրդին՝ ըստ գնահատման չափանիշների և հաշվետվություններ կայացման ժամկետների: Յուրաքանչյուր տարի Դպրոցի տնօրենը կառավարման խորհրդին է ներկայացնում ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը, որը ներառում է ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն: Դպրոցի կառավարման խորհուրդը կատարված աշխատանքը գնահատում է՝ արդյունքները արձանագրելով: Բացասական կամ ոչ լիարժեք արդյունքների դեպքում սահմանում է թերությունների վերացման ժամկետ, որի ավարտից հետո արձանագրում է կատարողականի վերջնական գնահատականը: Ծրագրի կատարման ընթացքում, ըստ անհրաժեշտության, կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը: Ծրագիրը մշտադիտարկվում և քննարկվում է մանկավարժական խորհրդի և ծնողական խորհրդի կողմից:

Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:

Այսուհետ դպրոցի կայքէջը, ինչպես նաև դպրոցի ֆեյսբուքյան էջը ակտիվորեն և լիարժեք կծառայեն որպես իրազեկման, համագործակցության և լուսաբանման հարթակներ:

Վստահաբար կարող եմ երաշխավորել, որ սույն ծրագրով վեր հանված բոլոր հիմնախնդիրների պատշաճ լուծման, ինչպես նաև իմ անձնական նվիրվածության և ամենօրյա քրտնաջան աշխատանքի վերջնարդյունքում կունենանք ցանկալի լուծումներ և հաջողված աշխատանք



ԵԶՐԱՓԱԿՈՒՄ: 2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար դպրոցը կունենա զարգացման ծրագրից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր (գործողություններ, կատարողներն, ժամանակացույց):

Որքան էլ ընդհանուր լինեն պահանջներն, օրենքներն ու ծրագրերը, յուրաքանչյուր դպրոց ունի իր առանձնահատկությունները և դրանից բխող մարտավարությունը:

Որպես հայ մարդու և մանկավարժի մեծագույն ցանկությունս է, որ դպրոցն արժանի լինի իր կոչմանը և նրա շրջանավարտը լիարժեք տիրապետի պետական լեզվին, ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, ունենա ազգային մտածողություն, ճանաչի հայ և համաշխարհային քաղաքակրթության նվաճումներն, իմանա բնապահպանման հիմնախնդիրները , լինի բնության և շրջակա միջավայրի պաշտպան:

Դպրոցը պետք է շարունակաբար լինի ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

08.06.2023թ.